



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՒՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՕԹՆԵՒՍԱՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ԶՄԻՒՌՆԻԱ ՇԱՐԱԹ 3 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1856

ԹԻՒ 531

ԶՄԻՒՌՆԻԱ 3 ՆՈՅԵՄԲԵՐԻ

Եւրոպիոյ քաղաքականութեան վիճակը, ինչպէս յայտնի է հասարակութեան, առայժմ աւելնալիս հանդարտութեան մէջ չգտնուիր. քանզի ծանր խնդիրներ կան որ պիտի լուծուին և պիտի կարգադրուին: Իսթանպուլի տէրութեանց և Ռուսիոյ մէջ եղած տարաձայնութիւնները՝ ի մասին որոշման սահմանաց Պետարպիոյ յայտնի է որ Փարիզի մէջ պիտի կարգադրուին. ուր երկրորդ անգամ ի ժողով պիտի գումարուին գաշակից տէրութեանց և Ռուսիոյ, Բրուսիոյ ու Լատուիոյ դեսպանները: Տարակից չկայ որ այս դժուարութիւնները որչափ ալ մեծ ըլլան, դարձեալ բարեկամօրէն պիտի լծնան. մանաւանդ որ յայտնի կերպիւ կրտեննուի թէ Ռուսիոյ և Վաղդիոյ կառավարութեանց մէջ արտաքին կարգի մտերմութիւն մը կայ, որ օրըստօրէ աւելնալու վրայ է:

Իրադրեաներէն ոմանք Նիզիոյ կառավարութեանը դէմ կըլսուին որ իւր նաւատորմիցը Սև ծովէն և Կոստանդնուպոլսոյ նեղուցէն չքաշեց թէպէտև պայմանեալ ժամանակը անցաւ: Իսթանպուլ ուրիշ լրագրութիւններ, թէ Նիզիոյ ղեկացի է եղեր և թէ Վաղդիոյ, կըգանգատին Լատուիոյ կառավարութեանը դէմ որ իւր զօրքը Իսթանպուլի իշխանութիւններէն տակաւին չհանց: Եւ լրագրաց զրուցածները հիմնաւոր բաներ չեն և ամենեւին ազդեցութիւն մը չեն կրնար ընել հասարակութեան վրայ: քանզի կերեւի թէ գաշակից կառավարութիւնները կատարելապէս համաձայն են Լատուիոյ հետ՝ այս կարգադրութեանց վրայօր:

Հիմնականում ամենէն դժուար խնդիրը՝ Լատուիոյ խնդիրն է. որ խիստ ծանրալիչու հետեւութիւններ կրնայ ունենալ, եթէ վեհափառ Սէրտիմանտոս թագաւորը յամառեալ մնալու ըլլայ իւր որոշմանը մէջ: Ինչպէս յայտնի է, արդէն Նիզիոյ և Վաղդիոյ դեսպանները Լատուիէն կանչուեցան և քաղաքական յարաբերութիւնները դադարեցան ի մէջ յիշեալ երկու մեծ տէրութեանց մէջ կողմէն, և Լատուիոյ կառավարութեան միւս կողմէն: Ինչզիոյ նաւատորմիցը Սև ծով ապարաստ կըմնայ և Վաղդիոյ նաւատորմիցը թուրք պատրաստ կըմնայ. որոնք ի պահանջէ հարկի, միաբանութեամբ Լատուիոյ նաւահանգիստը պիտի մտնեն: Լատուիոյ կառավարութիւնը ևս իւր կողմանէ զինուորական մեծամեծ պատրաստութիւններ կընէ, ոչ միայն դրոշն եկած յարձակման մը դէմ դնելու համար այլև իւր ժողովրդոց ազատասէր մարդ զսպելու համար: Շատ ժամանակէ ի վեր Լատուիոյ կառավարութիւնը գրեթէ բռնաւորական ընթացք մը և չափազանց խստութիւն կըբանեցնէ իւր ժողովրդոց վրայ: Իրաց այս վիճակը հաստատուն կըպահէ միշտ գրգռութիւնը բոլոր Իտալիոյ մէջ ուր ամեն օր ապստամբութիւն կամ խռովութիւն մը կըսպասուի: Եւ այսպիսի վտանգաւոր դէպք մը պատահելու ըլլայ նէ, տարակից չկայ որ Եւրոպիոյ հանգստութիւնը և ապահովութիւնը դարձեալ պիտի շփոթուի. և ահա այս պատճառաւ Նիզիոյ և Վաղդիոյ կառավարութիւնները մարդասիրական ոգիէ շարժեալ, արժան համարեցին բարեկամական խրատներ տալ Լատուիոյ կառավարութեանը, խնդրելով քաղցրութիւն:

որ լուսաւորեալ դարու պարագաներէն պահանջեալ քանի մը հարկաւոր փոփոխութիւններ ընէ իւր ներքին կառավարութեան ընթացքին մէջ: Իսթանպուլի տէրութեանը արհամարհանօք և հպարտութեամբ պատասխանեց այս բարեկամական աղբարարութեանցը. և ամենեւին հոգմը չուղէր ունենալ ընդհանուր խռովութեանցը և անկարգութեանցը վրայ որ կրնայ ծագիլ բոլոր Եւրոպիոյ մէջ ի պատճառս իւր կառավարութեան բռնական ընթացքին:

Եւ ինչորոշ վրայօր յետագայ յայտարարութիւնը հրատարակած է Վաղդիոյ կառավարութիւնը՝ Սիւրիէօր ըսուած պաշտօնական լրագրոյ մէջ, որ ուշագործեամբ կարգաւոր յօդուած մըն է:

«Հաշտութիւնը լծննալէն ետև, Վարիզի դեսպանաժողովոյն առաջին հոգը՝ նոյն հաշտութեան ուղղութիւնը ապահովեցնել էր: Եւ նպատակաւ, լիակատար իշխանութիւն ունեցող դեսպանները ի քննութիւն առին խռովութեանց տարբերները, որ տակաւին կըգտնուին Եւրոպիոյ մէջ, և մասնաւորապէս իրենց ուշագործութիւնը մատուցին Իտալիոյ, Յունաստանի և Վելճիգայի այժմեան կացութեանը վրայ: Եւ առ թիւ իրարու շտրուած տեղեկութիւնները՝ կատարեալ համաձայնութեամբ ընդունուեցան ամենէն ալ. քանզի ամենուն մտերմութիւնը և հոգը Եւրոպիոյ անդորրութեանը կըվերաբերէր, և միանգամայն մեծ յարգութիցոյց կըտրուէր ամեն վեհապետական վիճակաց անխախտութեանը: Ուստի, Վելճիգայի մէջ, կառավարութիւնը՝ համաձայն ըլլալով հասարակաց

ՔԱՂԱՔԱՐԱԿԱՆ

ԱՆԿՈՒՄՆ ՄԱՐԴՈՅ ԵՒ ՎԱԽՃԱՆ

Ո՛վ, շնորհաւոր բարձրագոյն ի Բարձրեղոյն հրաշակերտեալ Քառավորակ ջուրն առերի անհպելին Եդեմայ, Տարապետ կանգնէր յերկրի հողադանգուածն ի կաւոյ, Լրձան անդգայուն անգոր ի խլիրտ ինքնակամ: Ո՛հ, քանի՜ն նկարեցին ի քեզ փառաց վեհ դրուագք, Ո՛հ, քանի՜ն դրոշմեցին ի քեզ և վեպը հարուածոց: Պատկեր երկուց ուրոյն յաւիտենից վերբերող, Յաստուածային ներգործեալ Սատն աստուածայնով իմաստութեամբ:

Յանահաւութեան ծոցոյ անտի գերովկիան հասեալ շունչ կենդանարար սիւգ ընդ երես աստուածագործ կերտուածոյն, Տառանէր հողն բաժէ հրաշիցս, ոգի զգեցեալ կենդանի, Լճուրն փարփառ շողողէին յարի ոյն հարեալ նշուլից, Իսկական ընդ օդս տարածելով զօրէն թևոց ճախրական, Եւ գարշապարն թաթաքուր ընդ ոտնփոխ խոյտային: Ինչ նորաստեղծ մարդկութիւն ի գուռն եկեալ զառաջինն Օ՛հր Լրարին ճանաչէր զՍրենն էից յաւիտեան:

Օ՛ստուածաստեղծն էր տեսնել զմարդկութեան նախահայր Լըքայակերպ անդ ճոխացեալ ի նորաստեղծ աշխարհին, Իբրու տաճար իմն հոյակապ ահեղակերպ կանգնեալ տեսեամբ, Գերաբուն միտքն բարձրութիւն գմբէթ յարկին ամպխաղաց, Լրգարութիւնն սիւնը հաստաբետք ճշմարտութեան միաթարր, Եւ բարեպաշտ ոգին խարխիւ հիմանցն եդեալ անսասան, Լնձիւնիս անգամութեան պճնեալ փառօք երկնածիր, Ո՛ւր և տարբեր չհամազգիք օրպէս զառիւծ կան ի քուն:

Լնսահման իմաստութեան աստուածային ճառագայթ թափանցեալ, սհ, ցոլանայր ընդ յարկն սուրբ իւրաչէն, Յորմէ ծովք բուռն կրից ցաւը և օրհաս տարագրեալ, Լնմահութիւն երանաւէտ նդ անմեղութեան թագաւորէր: Եւ զաժան և ժանտաժուտ օձ անմարմին և չարթոյն, Հիմ խնդրացեալ ընդ փառըս մեր մախաս անդուլ անդադար, Հիմ այդպէս ի կործանումն անծերական շնորհածոյն Վաղնորոգայթ լարես կախուլ, անագործնդ քան զԵրոստրատ:

Եւալ, չեն հրաշակաւոյց յաւեր մառնեալ և յաւաի, Արպէս հոկայ մեծամարմին մանչելով յարեանն ողող, Տապալ յերկրի անկեալ դնի ընդ շեղաչեղ ժլածիւր: Ի խնձրանս դժօրնորովայն աշխարհագաւ Որոտղին: Ճշմարտութեան սիւնքն թաւալ առ խարխօքն հեծեն, Օ՛ի կշիռ արդարութեանն եղծեալ հարաւ վեր ի վայր: Քայքայեալ կան ամրութիւնը հիմանց ոգւոյն անվանդ, Լըստութեան հրու տարբեր գծնեացան ետ ընդ ետ:

Սէգ թանձրութեան փորեալ զուշովն ձգեաց ստուեր ահարկու, Ուստի յօթոց խաւարազգեաց ոլորտացաւ չեն համայն, Յորմէ ցաւը և բռնութիւնը փախարկութեանց, աղիւից, Իբր ի տփոյն Պանդորական յորդեալ անդէն անուեցան, Եւ եղծի անմահութիւն սքողեաց զգեմն անթառամ, Եւ մահ ամենակուլ թագաւորեաց ընդ բրնաւս: Եւրոյ երկին զանկումն մարդոյ, աւալ անկումն անյարիր, Լաց և դու, Սուսայ գողորիկ, զեղեռն մեղաց դառնաղէտ:

Արպէս ներկուռ ճարտարապետ աւերակաց ի միջի Ղեմ առեալ յայտնոյ և յայն փղձկի օխուր ի մորմը, Ի՛ ի վրատակայն փոշելից ի սեանց, քարանց, և խոյակաց, Կախնել անդէն զկործանեալն երկնէ խորհուրդ ի սրտի: Եւ այնպէս էիցս ամենարուեստ ճարտարապետ և Հեղինակ Շարժեալ ի գուլ ընդ հիքութիւն խօսուն յարկին եղծելոյ, Օ՛անձն բեկորսն և զգերբուկս աւանդելով ի բովս հողոյ, Վերականգնել զնոյն պայծառ քան զառաջինն վճռէ անդէն:

Ո՛վ, վճիռ աստուածային ճշմարտութեան անյեղի, Ար եղծականս սերմանեալ անապականս ժողովես: Եւ խախնամող աջոյն կնիք անքննելի խորհրդոց, Ուր ահաւորն արդարութիւն զողորմութիւն համբուրէ: Ո՛վ, վճիռ աշխարհաստ փրկութիւնութեան երկնաւոր, Պատիժ մահու հողածնեղոց, և առաջնորդ անմահութեան: Ո՛հ, դառն պարտք Լըսմային, զքեզ լացցուր յաւիտեան, Երեւա մեղ Տէր... երկրպագեմ Եստուածայինը հրամանաց:

Ե. Ս. Յ. Պ.

կործանաց հետ ի մասին անկարգ ընթացից քա-
նի մը լրագրութեանց, յօժարամտութիւն ցու-
ցուց այն անկարգութիւնները դադարեցնելու
ի գործ դնելով իւր ձեռքը եղած միջոցները :

«Յունաստանի մէջ, կառավարութիւնը փու-
թացաւ Փարիզի դեպքանախօսութեան խրատները
ի գործ դնելով, դրամական նոր կարգադրութիւն
մը ընելով և զանկաւ պաշտպան տէրութեանց
քննութիւնը և հաճութեանը յանձնելով :

«Կտակով մէջ, քահանայապետական աթոռը,
և ուրիշ տէրութիւնները կընդունին զհարկաւո-
րութիւնը ներողամտութեան և ներքին բարե-
կարգութեանց :

«Սխալն Վարդիի արքունիքը հպարտութեամբ
մը մերժեց Վաղդիոյ և Նիզիոյ խրատները,
թէ և խիստ բարեկամական կերպիւ տրուեցան :

«Կոստութեան և բուռնութեան միջոցները զորս
երկու Վիկիլիոյ կառավարութիւնը երկար ժա-
մանակէ ի վեր ի գործ կըդնէ, մեծապէս կըխը-
ռովէ Խալիան և փոսնի մէջ կըրձգէ Լաւրոյի
բարեկարգութիւնը : Լաւրոյի կացութեան մը
փոսնիները յայտնի տեսնելով, Վաղդիան և
Նիզիոյ կը յուսային թէ կրնան անոնց առաջ-
քը առնուլ խնամտուն խրատներ տալով յար-
մար ժամանակին : Բայց այս խրատները չման-
ցուեցան և երկու Վիկիլիոյ կառավարութիւնը
բացայայտ բանի մը առջև աչքերը դրոյնով,
ուզեց հաստատուն մնալ աղետալի և փոսնի
ւոր շաւղի մը մէջ :

«Իւր օրինակ տալու արարութիւնները խիստ
գէշ կերպիւ ընդունուելով, թշնամից երկ
բայութիւն ցոյց տրուելով մեր անկեղծ դիտա-
ւորութեանցը, մեր փրկուէտ խրատուցը դըպ-
չազական կերպիւ պատասխան յուղարկուելով, և
միջապէս կամակար մերժումները չէին կրնար
թոյլ տալ որ բարեկամական յարաբերութիւն
ները հաստատուն մնան :

«Ի՞նչ տէրութեան մը թելադրութեանը ա-
կանջ կախելով, թէ և Վարդիի դահլիճը փորձ
փորձեց տկարացնել իւր առջի պատասխանին
ազգեցութիւնը, սակայն այս զիջման երեւոյթը
գրեթէ նոր պայցոյց մը եղաւ իւր մտաց հաս-
տատուն օրոշմանը թէ չուզէր ամենեւին ուշա-
դրութիւն մատուցանել Վաղդիոյ և Նիզիոյ
խնամատարութեանը ի մասին ընդհանուր օգ-
տից Լաւրոյի : Բայց այս վիճակին մէջ տարա-
կայ մը չէր մնար . ուստի հարկ եղաւ դեպքանա-
կան յարաբերութիւնները դադարեցնել այնպիսի
արքունեաց մը հետ որ նոյն ինքը նոյն յարաբե-
րութեանց արժանաւորութիւնը պայլլեր էր :

«Պաշտօնական յարաբերութեանց այս դա-

դարումը՝ Վարդիի ներքին գործոցը միջամուխ
ըլլալ ըսել չէ . և ոչ պատերազմի յայտարարու-
թիւն մը : Ի վերայ այս ամենայնի Վաղդիոյ և
Նիզիոյ հպատակաց ապահովութիւնը կրնայ
փոսնի մէջ ըլլալ . այս պատճառաւ իրենց նա-
ւատորմիները պատրաստեցին . բայց չուզէին
յուղարկել զանոնք Վարդիի նաւահանգիստը
սխալ մեկնութեանց առիթ չտալու համար :
Լաւրոյի միջոցը դիպուածական պաշտպանու-
թեան մը որ սպառնական գործ մը չէ, չընար
նաւ համարուիլ իբրեւ քաջաբերութիւն կամ
օգնութիւն զոր կուտամբ անոնց որ կուզեն եր-
կու Վիկիլիոյ աթոռը խախտել :

«Վաղդիի եթէ Վարդիի դահլիճը յետ այսո-
րիկ արժանաւոր կերպիւ ճանչնալու ըլլայ Վաղ-
դիոյ և Նիզիոյ կառավարութեանց զգացմունքը
և իւր ճշմարիտ օգուտը . յիշեալ երկու կառա-
վարութիւնները պիտի փութան նորոգելու ի-
րենց բարեկամական յարաբերութիւնները ինչ-
պէս յառաջագոյն, և երջանիկ պիտի համարին
զերեք կարող ըլլալով այս կերպիւ նոր առհա-
ւատեայ մը տալ Լաւրոյի անդորրութեանը »:

Մեծ գէպք մը, որուն վայցօք խօսք կըլլար
քանի մը ժամանակէ ի վեր, տեղի ունեցաւ ի
Կոստանդնուպոլիս անցեալ ամսոյ 20ին : Բարձրա-
պատիւ Ռէշիտ փաշան, որ տարիուկէսէ ի վեր
քաղաքական գործերէ հեռացեալ էր, դարձ-
եալ նոյն գործերը տեսնելու հրաւիրուեցաւ
օգոստոսիս Սուլթանէն, որ հաճեցաւ Մեծ
Կարգադատի պաշտօնը յանձնելու անոր :

Բարձրապատիւ Ռէշիտ փաշային այսպիսի
մեծ պաշտօնի մը դարձեալ դուրսից, զոր քանի
մը անգամ մեծ խնամութեամբ ի գործ դրած
է, մեծ հաճութեամբ ընդունուեցաւ ամեն
տեղ : Բանդի իւրաքանչիւրը տրամութեամբ
կրտսէներ որ այս երեւելի քաղաքական անձը
գործերէ քաշուած է, այն ինչ այժման բազ-
մաթիւ դժուարութիւնները անոր երկար փոր-
ձառութիւնը և անոր բարձր յաջողակութիւնը
կըպահանջէին : Յիշեալ բարձրապատիւ փաշան
մեծամեծ և անգին ծառայութիւններ մատու-
ցած է իւր վեհապետին և իւր հայրենեացը, և
բարեբաղդութիւն մըն է անշուշտ որ դարձեալ
ուրիշ մեծամեծ ծառայութիւնը ընելու առիթ
տրուեցաւ Նորին Բարձրութեանը :

Հաւաստի կայսերական խաթմի հիւ մայրոնին
թարգմանութիւնը, որով Մեծ Կարգապետութե-
պաշտօնը շնորհուեցաւ Ռէշիտ փաշային :

«Իմ աղնուաշուք Վէզիրս, Ռէշիտ փաշա :

«Կառաւառս բազմաթիւ կարեւոր խնդրոց որ

ի կախ մնացած են և վստահարարութեան
բարեկարգ կառավարութեան մը ի մասին բոլոր
գործոց մեր Բարձրագոյն Իրան, արժան դա-
տեցի, ի պատճառս քու տեղեկութեանց և
քու բարենախանձ ջանքիդ, յանձնելու քեզ
Վէզիրութեան բարձր պաշտօնը :

«Քու Բոլոր խնամքդ, ինչպէս որ կըցանկամ
և կըսպասեմ քու անձեզ, պիտի նուիրես ի
քննութիւն և ի հաճոյական լուծումն գործոց :
«Վեհաբարձրեալն Կոստանդնուպոլիս ըլլայ
քեզ վստահարարական պարտաւորութեց քոյ »:

Նիցեալ ամսոյ 20ին մեծ ու փառաւոր հան-
դէս մը կատարեցաւ Տոքմա-Պարձէի կայսերա-
կան պալատը . ուր ներկայ էին Նիզիոյ դեսպան
վեհմափայլ լորտ Սթրէթֆորթ ար Ռէտֆորթ,
սըր Չարլս Լուիս մեծ պաշտօնեայ արարողու-
թեանց յառաջիկա ըստած կարգին, Վէշնա-
նովպետը, սըր Շէնրի Պիլլիք և դեսպանա-
տան գլխաւոր պաշտօնատարները : Նորին Վե-
հափառութեան չորս կողմը կըպտնուէին Մեծ
Կարգադատ բարձրապատիւ Ռէշիտ փաշան, ար-
տաքին գործոց պաշտօնեան և ուրիշ գլխաւոր
պաշտօնատարներ, ամենքն ալ շքեղափայլ միա-
կերպ զգեստներ հագած :

Մեծին Բրիտանիոյ դեսպանը հետեւեալ տե-
նախօսութիւնը ընելէ ետեւ, յառաջիկա ըստած
մեծաշուք կարգին նշանները մեծ յարգութե-
մատոյց օգոստոսիս Սուլթանին, առաջուց
կարգադրուած արարողութիւններով : Նորին
Վեհափառութիւնը ևս շնորհակալութեամբ
ընդունելով Մեծին Բրիտանիոյ օգոստոսիս
թագուհւոյն յուղարկած շքանշանները յետա-
գայ պատասխանը տուաւ :

Կրեմլիստիւն-Ին-Լա Սթրէթֆորթ ար Ռէտֆորթին
առ օգոստոսիս Սուլթանին :

Մեծին Բրիտանիոյ թագուհւոյն, իմ խիստ
շնորհալի վեհապետիս հրամանացը համեմատ և
զօրութեամբ իւր թագաւորական հրովարտակին
պատիւ կըհամարիմ ինձ մատուցանել Վեհափա-
ռութեան ձերում միաբանութեամբ սըր Չարլս
Լուիս-արարողանքովն յառաջիկա կարգին և
իմ պաշտօնակցիս այս բարեպատեհ առթիւ մէջ
զքանշանները մեծահոգ ցուց և խիստ աղնու
կարգին, յառաջիկա ըստած, որ հիմնեալ է,
ինչպէս ձեր Վեհափառութիւնը գիտէ, Նիզիոյ
թագաւորներուն ամենէն մէկ երեւելէն :

Վեհափառ Տէր, Նիզիոյ թագուհին իւր
ընկալատար իշխանութիւն ունեցող դեսպանին
ձեռքը նոյն շքանշանները ձեր Վեհափառութե-
յուղարկելով, երջանիկ կըհամարի զիւր որ ա-

նոնք այն օրէնսդիրին միտքն ալ եկած բան չէ :
Թէ որ կամքերնին անանկ ուղէր և անանկ վճիռ
հանած ըլլային թէ մէկ մարդ մը իր կենդանու-
թեանը իր ինչքը ուղածին պէս բանեցնէ .
բայց մեռնելէն ետքը ինչ ունի չունի՝ հասա-
րակալեալութեան մնայ, այս օրէնքիս դէմ գա-
նալ ընելու իրաւունք ամենեւին չէ իր ունեւար :

Կանկալ՝ դուք քու ինչքդ ինչ իրաւունքով
կըվայելէս կոր նէ՝ անոնց մէկն ալ բնական
օրէնքին վրայ հիմն չունի . մարդկային սահմանա-
դրութիւններ են : Օրէնքը դնող մարդոց երեւ-
ակայութիւնը մէկ ուրիշ կերպիւ որ դարձած
ըլլար նէ՝ քու կին աղքատութեանդ պատճառ
կըլլար, և դիպուածոյն ասանկ պատահիլն է որ
քեզի համար օգտակար մէկ օրէնք մը անոնց
կամքը եղեր է հաստատուելու . և դուք ալ այն
տեսնը այս օրինաց տակը ծնեք ես . որով ու-
նեցածներուդ տէր կրնաս կոր ըլլալ :

Մեքսիկոյն չէ որ քու հարստութեանդ օրինա-
ւոր տէր չես դուք . և ուրիշ մը քու ունեցած
ներդ կրնայ քու ձեռքէդ առնել : Բանդի Սու-
տուած՝ որ անոր բուն տէրն է՝ մարդկան անոնք
իրենց մէջը բաժանելու համար օրէնք դնելու
ներքէ է . և այս օրէնքներս մէկ մը հաստատու-
ված ըլլալէն ետքը՝ ասանք աւերել անիրաւութի-
է : Հիս ասիկա քեզ քեզմը օրինակ տուած մար-
դէս կըտարբերէ . որ անկա իր ձեռքի թագա-
ւորութիւնը միայն ժողովուրդին մէկ սխալ
կարծիքով ձեռք ձգեց . քանզի անոր ժառան-
գութիւնը Ստուած չհաստատուեւ օրինաւոր
չունի . բայց քու կը օրինաւոր ըրած է : Նիզիոյ

ՄԵԾԵՐՈՒՆՆ ԱՒՃԱՅԻՆ ԱՐԱՅ

1. Քու վիճակդ ճշմարտապէս ճանչնալու հա-
մար սա պատկերին մէջ մտածէ անիկա :

Սարգսն մէկը մրրկի բռնութեամբ մէկ ան-
ճանթ կղզիի մը մէջ ինկաւ . որուն բնակիչնե-
րուն թագաւորը կորուսած ըլլալով՝ անիկա փն-
տընելու վրայ էին : Եւ որովհետեւ դիպուածը
անանկ բերաւ որ՝ այս մարդուս թէ հաստակ և
թէ դէմքը ասոնց կորուստեցած թագաւորին
նման էր՝ թագաւորինս դասնը ըսելով ասիկա
բռնեցին, և բոլոր ժողովուրդը ասիկա իբրեւ
թագաւոր ընդունեց : Եւ անոնք ինչ ընելքը
չէր գիտէր . բայց վերջը հաճեցաւ ինքըզինք
իր բարեբաղդութեան ձեռքը թողուլ իրեն
ինչ յարգութիւն ըրին նէ ընդունեց . և թող
տուաւ որ զինքը իբրեւ թագաւոր բռնէն :

Բայց որովհետեւ իր բուն վիճակը չէր մոռնար
միշտ այն ալ աչքին առաջն էր որ այն մարդոց
կորսնցուցած և փնտռած թագաւորին ինքը չէ
և իրեն ինչ պատիւ ըլլայ նէ և նոյն իսկ թա-
գաւորութիւնը իրենը չէ : Ուստի երկու կերպ
խորհրդածութիւն և մտմտութեան ունէր : Խորհու-
րին մէկը սոյն էր՝ որով թագաւորութիւն կընէր
և մէկալ՝ որով իրեն բնիկ վիճակը և ինչ ըլլալը
կըճանչնար, և եղած աստիճանին մէջը զինքը դը-
նու ը միայն բազմ ու դիպուածը ըլլար գիտէր :
Լաւ երկրորդ խորհուրդս իր մաքին մէջը կըպա-
հար, և առաջինը կըլսուէր . ժողովուրդին հետ
վարվելը՝ առաջին խորհրդածութեանը վրայ էր .
կընելէն հետ երկրորդովը կըվարվէր :

Քու կին հիմա ձեռքդ գտնելով և տիրած
հարստութիւններդ՝ այդ մարդուն այն թագա-
ւորութիւնը ձեռք ձգելէն ուրիշ կերպ մէկ
բաղդ մը և դիպուած մը չկարծես, դուք քեզ
նէ և քու բնութեանդ ատոր բնական իրաւունք
մը չունէիր . ինչպէս որ այն ալ չունէր . և քու
կին աշխարհքի մէջ չէ թէ միայն մեծ իշխանի
որդի և հորդ իշխանութեանը ժառանգ գտնը
վեր, այլ և նոյն իսկ աշխարհք գտնը ինչ հա-
զար կերպ դիպուած մէկ տեղ դառն եղեր է :
Քու ծնանիդ մէկ կարգըվելէ մը, կամ քու
նախնիքներուդ ամենուն կարգըվելէն առաջ ե-
կած բան մըն է . Բայց այս կարգըվելուն սկիզ-
բը ուրիշ է . հայրդ մէկ աղջիկ մը տեսեր է .
կամ աղջկանը հորը աչքին աղէկ երեցեր է .
կամ ուրիշ ասոր պէս հազար կերպ անակունքի
դիպուածներուն մէկը եղեր է :

Կրտսե որ՝ ես այս հարստութիւնս իմ նախ-
նիքներէս ժառանգեցի . բայց չէ՞ մի որ անոնց
ալ վատաբերելու դիպուածի մը գլուխ կըկապէ .
պահվել և միջնե քու ձեռքդ հասնիլն ալ դիպ-
ուած է : Նոնց պէս ճարտար հազար հորդ ալ
կային, որ կամ բնաւ չընցան վատաբերելու, կամ
վատաբերելէն ետքը ձեռքէ հանեցին : Նախնի մի
կրկնաբնութիւն որ քու նախնիքներուդ ունեցած հա-
րստութիւնը բնական ճամբով քու ձեռքդ հա-
սած է : Եւ ալ չիտակ չէ . ժառանգելու օրէնք
ըրած բանդ՝ օրէնսդիրին ազատ կամքէն կախված
բան մըն է . որ այլ օրէնքը հաստատուելու օրի-
նաւոր պատճառ ունեցած կրնայ ըլլալ . բայց
քու կին ասոնց վրայ ունիմ ըսած բնական իրաւ-

նով հրատարակական վիճակին մը կուտայ ձեր օգտաւորութեան անձին համար ունեցած իւր բարեկամութեանը և յարգանքները, նմանապէս ծանուցանելով աշխարհի զանկէզ փառաբեր զոր ունի՝ առանց ընդհատութեան հաստատուն տեսնել միշտ զգալիակցութիւնը որ մեծամեծ օգուտներով հիմնեցաւ ի մէջ Անգղիոյ և օսմանեան տեսութեան :

Ձեր կայսրական անուան բաղմունտեան փառաց փայլ այս նոր շուքը յաւելցնելով որ նախ ընթաց օրինակ մը չունի, ձեր Վեհափառութիւնը կրնայ բարեհաճիլ մերձեցնել զայն այն անձնական բարեյօժարութեանը, այն մարդասիրական քաղաքականութեանը, որոնք մասնակց ըլլին ձեր կառավարութիւնը՝ Ներսիսի կառավարութեանց մեծ գերգաստանին, և որուն վախճանները, որ արդէն հրատարակուած են, իրենց կատարեալ գործադրութեանը կրկնապէս, որպէսզի ամեն տեղ իրենց անգին բարիքը տարածեն :

Ներքեցեք ինձ, վեհափառ Տէր, որ իմ մասնաւոր անուամբ ալ յայտնեմ թէ արջալի դիւրապաճ եմ պատուոյն որ այս հանգիստաւոր պարագայէս կրտսրածի նաեւ իմ վրաս, որ խոնարհ գործադիրն եմ այս հանգիստին :

Վ խնամաւոր Ստեփաննոս Գրիգորիս Կոնստանտնուպոլսէ :

Սեփականութեամբ կրնաւ իմ այս աղիւստեան շքանշանները իբրեւ նոր և յայտնի ցոյց մը բարեկամութեանը, որուն համար վեհափառ թագաւորին և տեղւոյնի ազգը այնքան ապացոյցներ տուին մեզ, և որոց համար միշտ երախտագէտ եմք : Վարեկամութեան այս ապացոյցը ևս առաւել մեծագին է իմ աչաց առջև, ըստորում անջնջել յիշատակ մըն է նաեւ բարեբաղդ գաշնակցութեանը մեր երկու տէրութեանց, որ խիստ արդիւնաւոր եղաւ բարի վախճաններով, և շատ օգտակար վասն կատարման կարգադրութեանը զոր սկսեցի, կատարելագործելու համար զբարեկեցութիւնը իմ ամեն կարգի ժողովրդոց : Այլն այս մեծ դէպքը կը համարեմ իբրեւ նոր հաստատութիւն մը յիշեալ գաշնակցութեանը : Երբ պատկերով իմ երախտագիտութիւնս անոր յայտնելու համար, սակայն առայժմ կաղաքեմ զվստմամբ զեռանք որ մեր շնորհակալքը և մեր մոտերիմ բարեկամութեան հաւատարմը ծանուցանէ թագաւորին :

Վ սեմափայլ դեսպանը պէտք է համոզեալ ըլլայ, թէ բերկրալի է ինձ որ այս աղիւստեան շքանշանները իւր ձեռքէն կընդունիմ :

Իր թագաւորութեան հրաժարելու ալ պարտական է : Աստարեկապէս անոր հաւատարմութիւն ունենալիդ այս կողմէն է որ՝ դուն ալ անոր պէտ՝ այս իրաւունքս ունենալու մէկ հիմք չունիս քու մէկ օրպիտութեանդ կամ մէկ արժանաւորութեանդ մէջ, դուն քեզ քու ջանքերդ այն հարստութեանը ժառանգ ըլլալու արժանի չես ըրեր : Բաւ մարմինդ ալ հոգիդ ալ ինքնին անտարբեր են, դուքս ըլլալու ալ կը յարմարին՝ նաւաւոր մը ըլլալու ալ, ամենեւին անանկ բնական կապ մը չիայ որ ասոնք մէկ մասնաւոր վիճակի մը կապէ, ուրիշ վիճակներուն ամենէն ալ հեռու տանի :

Արկէց ինչ կըլլէ : Արկէ ելածը այն է որ պատմած մարդուս պէս դուն ալ երկու կերպ խորհրդածութիւն պիտի ունենաս, գուրսէն մարդոց հետ վարվիլդք՝ քու աստիճանիդ վերջացածին յարմար պիտի ըլլայ բայց մէկ ծածուկ խորհուրդ մըն ալ պիտի ունենաս, և ճշմարիտն ալ այս խորհուրդդ է, որ դուն բնապէս անոնցմէ վեր ըլլալու բան չունիս : Թէոր հասարակաց մէջ ունեցած խորհրդածութիւնդ քեզ ուրիշ մարդոցմէն վեր կը վերցնէ, մէկալ ծածուկ խորհուրդդ քեզ պիտի խոնարհեցնէ, և ուրիշ ամեն մարդոց հետ հաւատարմ պիտի ընէ, Բանդի քու կին բնական վիճակդ այս է :

Բաւ վրադ զարմանալով քեզի նայող մարդիկ կարելի է որ այդ խորհուրդը չդիտենան : Երկար ծեն որ աղիւստագիր ըլլալ մէկ բնական մեծութիւն մըն է, և հասարակօրէն մեծերը բնապէս իրենցմէ վեր ուրիշ տեսակ մարդիկ կը կար-



Արշալոյս հրատարակիչը մօտ օրերս խիստ դառն և վշտալի կերպիւ փորձուեցաւ :

Իւր ամենաամբիւր ըմբիցը, գուտար շնորհալի՝ Յակոբ աղայի՝ Քէհրեան, որ իւր միւլթարիչ և սփոփարան էր, անցեալ ամսոյ 14ին անակնկալ մահուամբ առ Ստուած փոխեցաւ իւր ծաղիկ հասակին մէջ, խորին տրամաւթեան և կըսկծանաց կրակ մը թող տալով իւր գորովագութ ծնողաց և իւր գէթաղդ ընկերին սրտին մէջ :

Այս խիստ յաւալի դէպքին պատճառաւ, Արշալոյս հրատարակիչը անկարող եղաւ շարունակելու իւր լրագրութիւնը, որ երկու շաբթուան ընդհատումէ ետեւ, գարձեալ երեան կըլլէ, ներողութիւն խնդրելով իւր բարեկրտ ընթերցողներէն՝ այս ընդհատութեանը համար :

Մարտի 1-ին լրագրոյն հոկտեմբերի 16-28 թուոյն մէջ կը կարդամք :

«Սոսկ կը վերջանայ պայմանագրով» որ սահմանաւէ Փարիզի հաշտութեան գաշնագրութեան մէջ որպէսզի օտար զորքերը և պատերազմական նաւերը ելլին օսմանեան երկիրներէն, Սակայն մինչև որ Ռուսիան հաւատարմութեամբ իբրեւ գնէ յիշեալ գաշնագրութեան պայմանները, աւստրիական զորքերը Սլաւոնիալի մէջ պիտի մնան և անգլիական նաւատորմը Սեփական պիտի չեղնէ» :

Անգղիոյ իւր լրագրոյն մէջ կը կարդամք :

«Սակիւթի մէջ գրուած ազգաբաժանեան տեղեկութիւնը ի մասին Նաբոլիի գործոց, սուտ կը հանէ շատ աստիճաններ որ զուլցուեցան մօտերս, այսինքն թէ մեր օգոտաւորութեան գաշնակցին գաղտնագրոց կարգեր քաղաքականութեանը մէջ փոփոխութիւն մը եղած է, և թէ տարածայնութիւններ ծագել են այս երկու կառավարութեանց մէջ : Այժմ յայտնի է թէ Նաբոլիսի կայսրը՝ մեր հետ միեւնոյն շաղկն կը հետնի, որ նշանակուած է Փարիզի դեսպանագործովն խորհրդակցութեանը մէջ» :

Անգղիոյ կառավարութիւնը հարկաւոր եղած զինուորական պատրաստութիւնները մեծ գոր-

ծեն : Վուզեմ նէ՝ անոնց այս սխալ կարծիքը երեան մի հաներ, չեղիւ մի ուղեր, բայց այդ մեծութիւնովդ չափ մի փախցնէր, մի ամբար տաւանիր, մանաւանդ դուն քու էութիւնդ ուրիշներէն բնապէս վեր բան մը կարծելով դուն քեզ չմոռնաս :

Աս հասարակութեան սխալելով թագաւոր եղող մարդուն ինչ կըսես, թէոր իրեն բնական վիճակը անանկ մէկ կերպով մոռնար որ՝ կարծէր թէ այս թագաւորութիւնս պէտք էր որ իրեն տրվեր, ինքը անկա ժառանգելու իրաւունք ունէր : Նոր յիմարութեանը և խնթութեանը վրայ կը կարծմանաս : Բայց իրենց բնական վիճակը մոռցող երեանք մարդիկ ասկէց վար ինչ ունին :

Այս խրատաւ շատ շահաւոր և պիտանի է : Բանդի մեծերուն անգղաց ըլլալը և խորհուրդութիւնին և բռնութիւններն անկէց կուգայ որ իրենց ինչ ըլլալը չեն գիտեր, Իժուար բան է որ անանկ մարդիկ՝ որ ներսէն իրենք զիրենք ուրիշ մարդոց հաւատարմ կը ընեն, և Ստուածոյ իրենց տաւած քանի մը մանր մունր աղեկութիւններուն իրենց կողմանէ մէկ արժանաւորութիւն մը չունենալով ստացեր՝ ու ասով ուրիշներէն վեր եղեր են, ասանկները այնքան ամբարտաւանութիւն բանեցնեն : Այս բանին համար պէտք է որ մարդ ինքզինք մոռնայ, և կարծէ որ իրօք անոնցմէ վեր մէկ գերազանցութիւն մը ունի, և իմ քեզի հասկըցնել ուղած խաբվիլդ այս բանին վրայ կը կայանայ :

2. Ուրիշները քեզի որքան պարտական են նէ

ծուկութեամբ ի գործ կըդնէ Պարսից տէրութեան վրայ յարձակում մը ընելու համար : Արդէն բաւական դոք պատրաստուած են շնորհատանի մէջ, որոնք շոգենաւերով Պարսից ծովածոցը պիտի երթան : Ի վերայ այս ամենայնի կը յուսացուի թէ այս երկու կառավարութեան մէջ պատահած տարածայնութիւնը բարեկամութեան պիտի ըմբից միջնորդութեամբ գաղղիացի կայսեր : զոր Պարսից Շահը միջնորդ դատաւոր դրած է, կըսեն, այս վէճին մէջ :

Աւստրիոյ վեհափառ կայսեր հրամանացը համեմատ, զինուորական պատգամաւորութիւն մը, բաղկացեալ քանի մը երեանք անձինքներէ՝ մօտերս մեկնեցան Վեննայէն Պարսկաստան երթալու, ուր մեծագին ընծաներ կըտանին Պարսից Շահին Աւստրիոյ կայսեր կողմանէ, և միանգամայն ձեւեր պիտի ծախու առնուն : Աւստրիոյ կառավարութեանը համար : Սակայն պատգամաւորութիւն մը ևս մեկնեցաւ Ստրիք երթալու նմանապէս ձեւեր ծախու առնելու համար :

Ռուսի մէջ լատուարանի մը իրաւունք :

Ռատոս կղզին, որ սեպտեմբերի 30ին պատահած ահագին երկրաշարժէն մօծամեծ քնաներ տեսեր էր, կերկի թէ սահմանաւէր ևս առաւել աղետալի թշուառութեան մը ենթակայ ըլլաւ : Առօրեայ մը, որ 3000 կենդանարի չափ, այսինքն 135,000 օխայ վստօք կը պարուանակէր, կայծակէն կրակ առնելով, ստիպել աղետներ և կործանութիւն պատճառեց : Այս ամենագործալից դէպքին վրայօք հետեւեալ տեղեկութիւնները կը գրեն յիշեալ կղզին :

«Ռատոս», 28 Հոկտեմբերի 1836 :

«Ռատոսի բնակիչները տակաւին մօտ ցած չէին անցեալ ամսոյ 30ին պատահած երկրաշարժութեան ցաւալի դէպքերը, երբոր նոր և առաջին անգամ աղետալի թշուառութիւն մը գալով՝ ահագողի և յուսահատութեան մէջ թողուց այս գէթաղդ կղզին :

«Մայս 25ին կէսօր 4 ժամանցած, երկինքը ծանր ու սև ամպերով գոցուեցաւ որ փոթորիկ մը կը գողտչէին : Հորիզոնը ամեն կողմէն փայլալիկ կը տեսնուէին որոնք սաստիկ արագութեամբ մը իրարու կը յարկուէին :

«Հանկարծ ահագին փայլակ մը բոլոր երկինքը բորբոքեց և քանի մը մարդերիւրօրէն ետեւ ստիպել որոտում մը ամենուն սիրտը սառեցուց : Տունները խախտեցան իբրեւ թէ երկրաշարժ մը եղած ըլլար, պատուհաններուն և դրանց վերջերքը գետնի ինկան, և ամեն անհոն ապաւիկները կոտորեցան :

Գիտնալի պէտք է որ՝ անոնցմէ անկէց ելվել բան չուղես, քանզի ասիկա յայտնի անիրաւութիւն է : Սակայն ձեր վիճակի մարդոց մէջը ասիկա շատ կը դժուար ինք, քանզի իրենց վիճակին բնութիւնը չեն գիտեր :

«Նախհի մէջ երկու տեսակ մեծութիւն կայ, մէկն է օրինօք մեծութիւն, և մէկալը բնական մեծութիւն : Օրինօք մեծութիւնը մարդոց կամքէն կախում է, որ իրաւունք ունեցեր են մէկ քանի վիճակի մարդիկ պատուելու և ալ նոնց յարգութիւն մը տալու : Վնասականութիւն ու պատուաւ որ բոլորած աստիճանները այս կարգի մէջն են : Մէկ տեղ մը աղիւստեան մարդիկ պատու ունին, և մէկ ուրիշ տեղ մը հասարակ մարդիկ և ուսմիկները, տեղ մը մեծ զաւակները և տեղ մը սղոթիկ զաւակները : Սակայն չուն համար է : Բանդի մարդիկ ասանկ են ուղեր : Կանոնք և օրէնքները դրվելն առաջ ասոնք անտարբեր բաներ են : Ետքը ասանկ ըլլալը իրաւունք եղաւ, քանզի հաստատուած կանոնն ու օրէնքը խախտելը անիրաւութիւն է :

«Նախկան մեծութիւնները անոնք են որ՝ մարդոց կամքէն և հաճոյքէն կախում մը չունին : քանզի ասոնք հոգեւոր և մարմնայ ստոյգ և իրօք ունեցած յատկութիւններուն կը կայանին, որով իրարմէ անկի կամ պակաս յարգութիւն գտնելու արժանի կըլլան, և ասանկ են գիտութիւնները, մտայ լուսաւորութիւնը, խելքը, առաքելութիւնը, առողջութիւնը և ուրիշ :

Իսկ :

Սնայրդը հեղեղալ լիութիւն :

«Ստորագրողը՝ ստորագրող լինելու և, փողոցները կենտրոն, թեև անձրևը հեղեղի պես կուգար, իջնորդի ըստած արուարձանէն, ուր իշարայգինները կընակին, թանձր մութ մը կը տեսնուէր, որ բոլոր քաղաքը կը պատէր: Օճու մը և աղբորակի սաստիկ հոտ մը մարդոյս շնչուէր թիւնը կարգիւէր: Իւրաքանչիւրը կը կարծէր թէ կայծակը իւր տունը իջած է: Վերջապէս ցաւալի ճշմարտութիւնը իմացուեցաւ:»

«Կայծակը իրօք իսկած էր բերդին մէջ սուրբ Յովնանէսի Լսպետաց հին մայր եկեղեցւոյն վրայ ու ստորերկրեայ շտեմարաններուն մէջ մտած էր, ուր դարերէ ի վեր մեծ գումար վառօդ կը պահուէր: Եւ առայժմ 3000 կոստանդնուպոլսոյ կենդինար կամ 135-000 օխայ վառօդ կայ եղեր: Այս վառօդը կրակ առնելով, միւս կողմէն վախճանը և հետեւութիւնները ունեցաւ, ինչպէս որ ական մը (լաղճ) կը շինուէր և կրակ կը տրուէր մեծ շէնք մը և բերդ մը կործանելու համար: Սայր եկեղեցին և իւր զանգակատունը, նմանապէս զանազան պաշտոններ հին ասպետաց՝ բոլորովին կործանեցան: Իսկանդակ փողոցներ աւրուեցան, ժամացուցին աշտարակը, հասարակաց դպրոցը, Սէնթ Մէն և գրքատունը կատարելապէս քանդուած են: Իսկանդակ տուններ ծանր վնասներ կրեցին: Իսկ այն որ աւելի ցաւալի է, այն որ աւելի մարդոյս սիրտը կը կսկծցնէ և արցունքներ կը պատճառէ, մարդոց զահերն են, որ իրենց կեանքը կորուսին այս սուկալի դէպքին մէջ: Թեև տակաւին յայտնի չէ միւսողներուն թիւը, սակայն տարակոյս չկայ որ խիստ շատ պիտի ըլլայ: Իսկանդակ գերդաստաններ թաղուած մնացին փլատակաց ներքև, որոց մէջ կը գտնուէր գայմապամ Իւրթէ Գէֆէն տիկին գերդաստանը՝ բաղկացեալ 18 հոգիէ: Իսկ ինքը և իւր գործակալը՝ այն օրը տունը չըլլալով կեանքներին ազատեցին:»

«Դատարար, իւր վեր պէնին ընտանիքը և ուրիշ պատուաւոր գերդաստաններ ևս կեանքերնին կորուսին աւերակաց տակ: Համոյի փաշան թեթեւ կերպիւ մը երեսէն վերաւորեցաւ, և բազմաթիւ անձինք չարաչար վնասեցան:»

«Վեհ օր փլատակաց տակէն դիակներ կը հանեն, և քանի մը հոգի ազատեցան թէ և աւերակաց ներքև մնացեր էին:»

«Հատ մը ցորեն, որ բերդին մէջ պահուած էր որպէսզի հարկաւոր եղած ատենը դուրս հանուի, փլատակաց ներքև թաղուեցաւ և յայտնի մը չկայ դարձեալ ձեռք ձգելու զայն: Այս բանը խիստ ցաւալի է, քանզի արդէն արմատաց պակասութիւն կար կղզւոյ մէջ: Ուստի այժմ ևս առաւել պիտի շատնայ կարօտութիւնը:»

«Իսկանդակ ներքին կողմերը տակաւին զանազան շտեմարաններ կան վառօդով լեցուն: Ուստի կայսերական կառավարութեան մարդասիրական խնամքը և ուշադրութիւնը կը հրաւիրեմք որպէսզի հաշիւաւոր եղած միջոցները խոյն ի գործ դնեն, պահպանելու համար զքաղաքը նոր թշուառութենէ մը:»

«Իրակ առած վառօդը, սուրբ Յովնանէս եկեղեցւոյն ստորերկրեայ շտեմարանաց մէջ շատ երկար ժամանակէ հետեւ պահուած ըլլալով, իւր զորութեան մեծագոյն մասը կորսնցուցած էր, ապա թէ ոչ, բոլոր քաղաքը և իւր արուարձանները պիտի կործանուէին:»

ԿԱՍՏԱՆԱԿՈՒՊՈԼԻՍ, 1 ՆՈՅՆԵՄԲԵՐԻ

Կառավարութեան ուշադրութիւնը ներքին բարեկարգութեանց վրայօք զբաղեալ է, և այս նպատակաւ անպակաս խորհուրդ կըլլայ Իւրթէ րաբոյն Իսուր նախագահութեամբ: Սեծ իշարագոս բարձրապատիւ Ռէշիտ փաշային: Թեւ պէտեւ արտաքին քաղաքականութե վերաբերեալ ծանր խնդիրներ ևս կան լուծուելու, ի վերայ այսր ամենայնի այս խնդիրները դաշնակից մեծ տէրութեանց խորհրդակցութեամբ կարգադրուելու գործքեր ըլլալով, տարակոյս չկայ թէ շուտ կամ ուշ ամեն դժուարութիւնները բարեկամօրէն պիտի լըննան:»

«Կայսերական հրովարտակաւ Ռաշիտ Էֆէն տիկն՝ Պարսկի կուսակալ անուանեցաւ:»

«Հալիլ-Պէյը, որ անցեալները օսմանեան դժուար անուանեցաւ Յունաստանի արքունիքէն, այս շաբթու պատիւ ունեցաւ օգոստոսիա Սուլթանին ներկայանալու, որ մարդասիրութե ընդունեցաւ այս երեւելի պաշտօնատարը: Հալիլ-Պէյը, Սաւաթ-Պէյը շոգենաւով արդէն մեկնեցաւ իւր պաշտօնին երթալու:»

«Օգոստոսիա Սուլթանը բարեհաճեցաւ Սէֆիէի կարգին առաջին աստիճանին շքանշանը և պատուոյ սուր մը ընծայելու որը Չարլս իսկանդակ պաշտօնատարին արարողութեանց յառաջ թիւն կարգին: Որ անցեալ շաբթու մեկնեցաւ Լոնտոն վերադառնալու Գաւաթ-Շոգենաւով:»

«Պարսից արտաքին կարգի դեսպան Սէրուր խանը անցեալ շաբթու այցելութեան գնաց Ռուսաց դեսպան մօտեւ ար Պուրդընիէ ֆին:»

«Նշեալ ամսոյ 30ին երեքշաբթի գիշեր, մեծ հրկիզութիւն մը պատահեցաւ ի Պէյօղլու Գաւաթ-Շոգենաւով ըստած մեծ փողոցներուն մէջ կուս մէջ: Եւ թէպէտ ամեն կողմէն շուտով օգնութեան հասան, բայց և այնպէս 7-8 ժամու մէջ 5-600 տուն հրոյ ճարակ եղան:»

«Մարտիկաւոր ևս հոկտեմբերի 20ին խիստ մեծ հրդեհ մը պատահելով, շատ վնաս եղեր է:»

ՅԱՆՈՒՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

ՉԻՆԱՆԻԱ, 5 ՆՅԵՄԵՐԻ:

Նախնադիւն նոր կուսակալ փոխադարձ Սահմաւ փաշան, յորմէ հետեւ ի վեր հասած է, ան դադար ու բարենախանձ ջանք հոգ կը տանի իւր խնամքը յանձնուած ժողովրդեան բարեկեցութեանը և անդորրութեանը վրայ: Եւ այս պատճառաւ նախ իւր ուշադրութիւնը մատոյց ուտելիքներու վերաբերեալ բաներուն, որոց գիները կը յուսամք թէ օրըստօրէ կը չափաւորուին և կը կարգադրուին: Իսկ յայտնաւ, առաւել ժողովոյն նախագահը ի վաղուց անտի կուսակալին փոխանորդը կըլլար միշտ: Վսեմա փաշ Սահմաւ փաշան ուղեւով որ այս ժողովը անկախ ըլլայ կուսակալութեան պաշտօնատարներէն, հրաման ըրաւ որ նոյն ժողովոյն անդամները իրենց մէջէն մէկը նախագահ ընտրեն: Այս ընտրութիւնը ամենայն ազատութեամբ եղաւ և մեծաբոյ Օսման աղան, որ խոհեմ և բանի բուն անձ մըն է, առաւել ժողովոյն նախագահ անուանեցաւ ընդհանուր հաւանութեամբ և բարձր հաճութեամբ յորին Վսեմութեան:»

«Իստոյն Զիւթիւնը, որ Այսթընի երկաթուղւոյն ճարտարապետն է, մօտերս հասաւ ի վեր Սոնտոնէն գալով, և քանի մը գործաւորներ հետ առնելով մեկնեցաւ շինուելու ճանապարհին տեղուանքը երթալու՝ անոնց վրայ բըն նութիւններ ընելու և տեղեկութիւններ ստանալու համար:»

«Հորանտիոյ տէրութեան ֆոնկաթը Տիէր-Աֆէն անուն, որուն հրամանատարն է մօտեւ Իսլա Տէսքիւրի սեպուհը, անցեալ ուրբաթ օր հասաւ մեր նաւահանգիստը Հորանտայէն գալով: Յիշեալ ֆոնկաթը, որ Արեւելի նաւահանգիստները պտտելու եկած է, ի վերջէն մեկնելուն նախ լիքեքանդերիս պիտի երթայ:»

«Ռուսաց վեհափառ Միքայիլով Նիկոլորդ՝ կայսերական գահը ելելուն, հրաման ըրաւ որ ընդհանուր աշխարհամար ըլլայ իւր տէրութեան մէջ եղած բոլոր ժողովրդոցը: Այս աշխարհամարոյն համեմատ՝ Ռուսաց տէրութեան բնակչաց թիւը կը հասնի 63 միլիոն հոգիի:»

«Ռուսաց օգոստոսիա պրիսցեալ կայսրուհին, այսինքն Միքայիլով Նիկոլով մայրը՝ Նինաւա հասած է օգոստոսիա ժամանակ համար: Ուր մեծ յարգանք ընդունուէր է Սարտենիոյ թագաւորէն, կայսրուհւոյն հետ եղած պաշտօնակալաց թիւը 60 հոգիի կը հասնի:»

«Համալուրկէն հոկտեմբերի 22 ամսութեամբ կը գրեն թէ Ռուսաց նաւատորմը մը որ Միքայիլով Նիկոլով պիտի երթայ ի Նաւահանգիստը երկաթ ձգած կըսպասէ: Այս նաւատորմը ըստ իրաւացեալ Վիկտորի և Իոնան ըստած շոգենաւ ֆոնկաթներէ, Գաւաթ-Շոգենաւ առաջատար ֆոնկաթէ, Վիկտորի ըստած պոնթէ և շոգենաւէ մը:»

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԵՒ ՆՈՒՅՍ

ՉԻՆԱՆԻԱ, 5 ՆՅԵՄԵՐԻ:

Այս շաբթու 17 կողով աֆիոն վաճառեցաւ 147 1/2—145 1/2 զի չէ չէրին: Եւ առայժմ քաղաքի մէջ դոնուած անվաճառ աֆիոնին թիւը՝ 300 կուղի չափ է: Տօրոնը իջնալու վրայ է: Եւ այսօրուան սրժէքը՝ 290—284 զի չէ կենդինարը, ըստ տեսակին: Հաղարքութեան աւելի ճէճի կայ քաղաքի մէջ: Եւ այս պարանքը շատ հանդարտութեան մէջ է և այս օրերս միայն 14 քուրձ ծախուեցաւ 7—7 1/2 զի չէ օխան: Գարահիսարի լուսացած բուրգ ծախուեցաւ այս շաբթու 530 զի չէ կենդինարը: Փաշամուտը միշտ կուզուի: Միգլոյ տեսակ նոր պարանք վաճառեցաւ 85—96 զի չէ կենդինարը ըստ տեսակին: Չոր թուղը, որ խիստ բիշ կուգայ այժմ, 90—105 զի չէ կը վաճառուի կենդինարը: Սէ չամիլը 99—101 զի չէ, տեղւոյ կարմիր չամիլը՝ 160—170 զի չէ, և Պէյլը՝ 110—125 զի չէ:»

ՅԱՆՈՒՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Սօֆիա Պէրու-Քէն իւրի խարանիկան մէկ անգամ էլի գիրքով լեցաւ, որոն գիրքը հայերէն և իտալերէն գիրքերն է: Այս անգամ էլի գիրքն է իտալերէն լեզուով, այս անգամ գիրքն է: Եւ որ իտալերէն այս անգամ իտալերէն լեզուով ծանաւոր պիտի լինէր:»

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ



ԳԻՆԱԿԱՅԻ ԹԱՎՈՅԻ ՀՈՐՈՒՆԷՆ:

Այս անգին դեղը, որ բոլորովին բաղկացեալ առողջարար խոտերէ, ի պարունակէր իւր մէջ ոչ միայն և ոչ ուրիշ վնասակար գոյացութիւններ: Ուրիշ որ քաղցր է փափուկ և մատաղ մանկանց ու խիստ ակար կազմուածոց համար, նոյնպիսի շուտ և հաստատուն է արմատախիլ ընելու գինաւորութեան: Ներքին ամենին խիստ ուժեղ անձինքնուրէն: Բայ յայտնաւ կատարելապէս անվնաս է ի մասին իւր ներգործութեանցը և հետեւութեանցը: Այս դեղը առնուելով, կը հետազօտէ և միւս անգամայն կը փարստէ ամէն տեսակ հիւանդութիւնները որ և իցէ աստիճանի հասած ըլլան և որպիսի հին ժամանակէ հետեւ արմատացեալ ըլլան: Հազարաւոր մարդիկ բժշկեցան այս դեղը գործածելով, որոցմէ շատերը գերեզմանին դուրս հանելէն ետեւ ի վեր յարաւորութեամբ վերստին ստացան իրենց առողջութիւնը, և կենդանական զօրութիւննին ձեռք բերին երբոր Լիւիս ամեն դեղերէն յոյսերնին կորէր էին բոլորովին: Ուստի աստիկ անտաքեալները յուսահատութեան մէջ թող չլինան: Եւ արժանաւոր փորձը ընեն այս պատուական դեղին ազդու ներգործութեանցը, և շուտով ինչ քաղաքաւ լուծիւր ստանալու բարեբաղութիւնը պիտի ունենան:»

Վերջորէն գինաւորները, որպէսզի որպիսի կարեւոր փութեամբ հոգ տանին գործածելու այս բժշկարար դեղը հետեւեալ խօթութեանց համար:»

- Բնականական ջերմ (Ֆիէլը Էնթերմութան):
- Հիւսկալութիւն (սաթմ):
- Մարդոյս մօրթոյն վրայ եղած բիծերու ակտը:
- Քրոնիական ջերմքը: Մաղձ (գաֆրա):
- Թոքացաւորութիւն, կամ Թոքային տխրութիւն:
- Նուաղում (աթոնի): Զրգորութիւն (սրագա):
- Օձիկ (երանձեղ իլէթի): Խիթ (սանձը):
- Կանանց ամսական օրնաց անկարգութիւնը:
- Ամէն տեսակ ջերմքը: Ունեցաւութիւն (նիգրիս):
- Գլխացաւութիւն: Դժուարամարտութիւն:
- Բորբոքում (էնթերմաթիս): Դաւալ (սարքը):
- Լեղի (գառա ձիւր): Կիւսկալութիւն:
- Երկամաթեւութիւն (նիգրիս):
- Տեւատեւութիւն (մայար):
- Յօգացաւորութիւն (րիւսթիս):
- Միզարգելութիւն: Խոյլ պարանոցի (սուսա):
- Երկրորդական դէպք գաղղիական ակտի:
- Խիճ երկամաթի և միզանոցի (կուսկը):
- Սաստիկ ջրացաւութիւն (սրագա):
- Ուռնոց (իւլմէթ): Կեղք (իւլմէթ):
- Ամէն տեսակ որդէքը (սողուն):
- Վերջորէն ակտի (Ֆիէլը Էնթերմ):
- Թուլութիւն և նուաղում ուժոյ, որ և իցէ պատճառներէ ծագած ըլլան:

Այս դեղահատքը կը վաճառուի ի Լոնտոն միտր Թոմփս Հորուէյն գործատունը, որ է Սթրէթ Լուսաւ Թաղ (Թիւ 244): Իսկ օտար երկրները գլխաւոր դեղավաճառաց ըով կը գտնուի: Ի վերջէն մէջ սինթոս Սինթոս Զիւսիկ դեղավաճառին խանութը կը ծախուի: Որ ի Բուսկայ Թաղը Սուլթանի Զապաթի ըստած փողոցը Թիւ 30:»

Այս դեղահատքի տուփերը գանազան մեծութեամբ են, և կը վաճառուին 8—21 և 52 զուռուշի իւրաքանչիւրը, և ումէն մէկուն մէջ տպեալ ծանուցագիր մը կայ, որ յիշեալ դեղահատքը գործածութեան վրայօք մանրամասն տեղեկութիւններ կուտայ, գաղղիներէն, անգղիներէն և հայերէն լեզուաւ:»

Միտր Թոմփս Հորուէյն իւր այս դեղորէնց համար Սթրէթ Լուսաւ Թաղ քաղաքը և նոր գործատուն մը հաստատեց: Որ կը գտնուի ի Սթրէթ Լուսաւ փողոցը, Թիւ 80:»

Հրատարակէ և տէր լրագրոյս:

Գ. Լուսա Գ. Պաշալեան: